# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*«Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:*
(Մատթ. ԻԸ 19)

Սույն թվականի փետրվարի 19-ին, Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնին մատուցված Ս. Պատարագի ընթացքում, կատարվեց քահանայական ձեռնադրություն և օծում: Օրվա պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ասպվածային շնորհը կոչեց քահանայական ձեռնադրության հինգ նվիրյալ սարկավագների, որոնք «յանձն առան կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոց եւ հայրապետաց, եւ կալ ըստ կանոնաց նոցա... ամենայն պատրաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ...»:

Ձեռնադրության նախորդ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, տեղի ունեցավ Վաղարշակ, Արսեն, Սահակ, Արամ և Սերժ սարկավագների քահանայական կոչման արարողությունը: «Նայեաց ի մեզ» հոգեպարար շարականի երգեցողության ներքո ընծայացուները ծնկեցին Մայր Տաճարի Ավագ դռան մոտ և աստիճանաբար, սաղմոսասացների ու դպիրների երգեցողության ներքո, խարտավիլակ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի ուղեկցությամբ, մոտեցան Իջման Սուրբ Սեղանի առջև բազմած ձեռնադրող Սրբազանին՝ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանին, որը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, հարցեր ուղղեց խարտավիլակ Հայր Սուրբին և քահանայացուներին: Կատարվեց ընծայացուների հավատքի, կրթության և գիտության մասին վկայություն, որին հաջորդեցին ավետարանական ընթերցվածքները:

Այնուհետև կատարվեցին Սուրբ Երրորդության մասին ուղղափառ հավատքի և դավանության, Քրիստոսի մարդեղության մասին քննություն և խոստովանություն: Մեկ առ մեկ մերժվեցին և նզովվեցին բոլոր հերետիկոսներն ու հերձվածողները: Վերջում ընծայացուները բարձրաձայն կարդացին հավատքի խոստովանությունը:

«Հայր մեր» և «Պահպանիչ» աղոթքներով ավարտվեց կոչման կարգը:

Հաջորդ օրը, փետրվարի 20-ին, հընթացս Ս. Պատարագի կատարվեցին Վաղարշակ, Արսեն, Սահակ, Արամ և Սերժ սարկավագների քահանայական ձեռնադրու-

թյունն ու օծումը՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի և խարտավիլակությամբ Տ. Օշական վրդ. Գյուլգուլյանի:

Պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած...» մաղթանքը: Ապյանում ծունկի եկած ընծայացուները, սաղմոսների և շարականների երգեցողության ներքո, բարձրացան Ս. Խորան: Ընթերցվեցին քարոզներ, աղոթքներ Մաշտոցի, որոնց հաջորդեց հրաժարման պահը: Քահանայացու սարկավագները դառնալով արևմուտք, ձեռքերը վեր բարձրացրած, «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» երգի ներքո հրաժարվեցին աշխարհից և աշխարհիկ կյանքից, որից հետո Սրբազան Հայրն իր աջը դնելով նվիրյալների վրա՝ ասաց. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցին սոքա զաստիճան քահանայութեան՝անարատ պահել առաջի սեղանոյն Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև Ձեռնադրության Մաշտոցից կարդացվեցին օրվա ճաշու ընթերցվածքները, և Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»-ի պահը: Այստեղ ընդհատվեց Պատարագը, և դպիրները շարունակեցին երգել ձեռնադրության շարականները: Աղոթքների ընթերցմամբ տրվեցին քահանայական զգեստները, և ընծայացուները փակ վարագույրի հետևում, «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո, զգեստավորվեցին պատարագչի հանդերձանքով:

Ապա կատարվեց ձեռնադրյալ քահանաների օծման արարողությունը: Սրբազան Հայրը երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականը՝ հեղեց Սուրբ Մյուռոնը բթնոցի (փոքրիկ բաժակ) մեջ, որից հետո դրոշմեց նրանց ճակատը, աջ և ձախ ձեռքերը՝ տալով նրանց քահանայական անուններ. Վաղարշակ սարկավագը վերանվանվեց Տ. Հարություն, Արսեն սարկավագը՝ Տ. Զենոն, Սահակ սարկավագը՝ Տ. Թաթուլ, Սերժ սարկավագը՝ Տ. Ղևոնդ, Արամ սարկավագը՝ Տ. Իգնատիոս: Հետո Սրբազանը նրանց հանձնեց Սուրբ Սկիհը, մաղթման «հանդերձ կենարար Մարմնով եւ Արեամբ»՝ տալով Սուրբ Պատարագ մատուցելու իշխանություն:

«Պահպանիչ» աղոթքով ավարտվեցին Ձեռնադրությունն ու Օծումը, և Սրբազան Հայրը նորընծաներին ուղղեց իր հայրական պատգամը՝ հիշեցնելով տոնի խորհուրդը, Ղևոնդյանց քահանայից անձնազոհությունը:

Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ նորընծա Տ. Իգնատիոս քահանայի աբեղայական օրհնության կանոնը: Ձեռնադրող Տ. Եզնիկ եպիսկոպոսը Մաշտոցից աղոթքներ կարդալով՝ իր օծյալ աջը դրեց նորընծայի գլխին՝ հայցելով Տիրոջ օգնությունը, Սուրբ Հոգու էջքը և շնորհը: Սրբազան Հայրն ընթերցեց նաև Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձին ուղղված աղոթքները:

Արարողության վերջում կատարվեց վեղարի օրհնության կարգ: Վեղարը դրվեց նորընծայի գլխին՝ իբրև կուսակրոն քահանայության խորհրդանիշ:

Թող Աստված հաստատ պահի նորընծաներին իրենց կարգի մեջ և արժանացնի՝ լինել «մշակք առանց ամօթոյ»: